

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԱՅ Առաքելական Սուրբ Եկեղեցու խորանից վերստին համայն աշխարհին ավետվում է մեր Տիրոջ եւ Փրկչի Սուրբ Ծննդյան հրաշափառ լուրը: Կրկին մեր սրտերը եւ հոգիները ջերմանում են Հիսուս Քրիստոսի մարդեղացման խորհրդի գիտակցումից եւ լցվում նորանոր շնորհներով: Տարվա այս սրբազան պահին մեկ անգամ եւս մեր ողջ էությամբ ընկալում եւ հասկանում ենք, որ տիեզերքի Արարիչը մարդեղացել, դարձել է մեզ նման մեկը՝ հանուն մեր իսկ փրկության: Այս խորհուրդն ակամայից մղում է մեզ անդրադառնալու մեր կյանքին, փորձելու այն բեթղեհեմյան լույսի ներքո քննել եւ վերարժեւորել: Եւ այս դեպքում հատկապես կարեւոր նշանակություն ունի մեր ընտանիքին անդրադարձը: Ժամանակակից աշխարհում ընտանեկան ամրությունը եւ կապերը գնալով ավելի ու ավելի են թուլանում, եւ որպես դրա հետեւանք՝ մարդն իրեն զգում է միայնակ ու մոռացված՝ ընկնում հուսահատության գիրկը: Սակայն Ս. Եկեղեցին ուսուցանում է, որ մենք բոլորս մի մեծ ընտանիք ենք՝ միավորված Հիսուս Քրիստոսի սիրով. եւ որտեղ սեր կա, այնտեղ առկա չեն միայնությունն ու հուսալքումը: Քրիստոնեության այս կենսաբեր իրողությունը նկատի ունենալով՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնին, պատգամով իր ժողովրդին դիմելիս, 2019 թվականը հռչակեց Ընտանիքի տարի:

Ընտանիքն ու ընտանեկան հարաբերությունները Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հայրերի մշտական հոգածության կիզակետում են, եւ յուրաքանչյուր հայ քահանայի հովվական ամենօրյա առաքելության ասպարեզն են ամեն հայ տուն եւ ամեն գերդաստան, ամեն ընտանիք:

Ուստի մենք՝ համայն հայությունը, Հայրապետական պատգամը լսելով, պետք է մտորենք մեզանից պահանջվող քայլերի ու գործերի, մեր անելիքների մասին։ Պետք է գիտակցենք, որ ընտանեկան ակութում մեր հայրական կամ որդիական պարտքը կատարելով՝ ծառայում ենք նաեւ համազգական նպատակների։ Մեր ընտանիքն ամրացնելով՝ ամրացնում ենք մեր Ազգի մեկ բջիջը, մեկ օղակը, իսկ Ազգն ամրացնելով՝ ամրացնում ենք մեր Պետությունը։

Պետությունն ու Ազգն ամուր են իրենց ընտանիքներով, ուստի ընտանիքի տարի հռչակելով, առավել նվիրվելով մեր ընտանիքներին, առավել ամրացնելով՝ նպաստում ենք նաեւ մեր Պետության եւ Ազգի ամրացմանն ու զորացմանը։ Եւ այստեղ լոկ միասնական ջանքերով է հնարավոր հաջողության հասնել, հաջողել։ Եւ երբ միակամ ու միասնաբար կարողանանք մեկտեղել մեր ջանքերը, այնժամ նաեւ մեր գործերն ու ընթացքը հաջող կլինեն, ու այդ պարագային թերեւս կարժանանանք իր հայացքը հեռու հեռավոր ապագային հառած մեր մեծագույն իշխանի խոսքերը երկրորդելու պատվին՝

«Որպէս ամենայն տանուտէր ընդ տան իւրոյ
եւ ընդ ընտանեաց հոգայ՝
սոյնպէս եւ մեք հոգամք
ընդ մեր Հայոց աշխարհիս շինութեան»։